«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
_____ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
«_____» _____ 2024Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ» ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ, «ՀԱՆԴԲՈԼ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 2024Թ. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ընդունելության քննությունները հաշվարկվում են 20 միավորի սկզբունքով և անցկացվում են 3 վարժություններից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 1-7 միավորով:

Վարժություն N 1. Նետում դիպուկության, դարպասին տեղադրված նշանակետին (թիրախի չափսերը 50x50սմ): Կատարվում է 10 նետում: 5-ական նետում հենումից, 3 քայլից ձախ և աջ տեղադրված թիրախին:

Վարժությունը գնահատվում է 1-7 միավորով:

Կատարման քանակը	2	3	4	5	7	8	9
Տրվող միավորը	1	2	3	4	5	6	7

Վարժություն N 2. Գնդակի նետումը հեռավորության և դիպուկության:

Նետումը կատարվում է դարպասապահի հրապարակից դեպի դիմացի դարպասը, առանց գնդակը գետնին դիպչելու կամ մեկ անգամ դիպչելով դարպասի գրավումով: Կատարվում է 7 նետում: Վարժությունը գնահատվում է 1-6միավոր:

Տղամարդիկ

Կատարման քանակը	1	2	3	5	6	7
Տրվող միավորը	1	2	3	4	5	6

Կանայք

Կատարման քանակը	1	2	3	5	6	7
Տրվող միավորը	1	2	3	4	5	6

Վարժություն N3. Գնդակի նետում նշանակետին, վարումից հետո (տես ծանոթություն): Վարժության համար տրվում է մեկ փորձ:

Վարժությունը գնահատվում է 1-7 միավորով:

Տղամարդիկ

Կատարման ժամանակը (վրկ)	15.0	14.0	13.0	12.0	11.0	10.0	9.0
Տրվող միավորը	1	2	3	4	5	6	7

Կանայք

Կատարման ժամանակը (վրկ)	16.0	15.0	14.0	13.0	12.0	11.0	10.0
Տրվող միավորը	1	2	3	4	5	6	7

Ծանոթություն. Մեկնարկը դիմային գծից: Դիմորդը ազդանշանով գնդակը նետում է մինչև կենտրոնի գիծը, վազքով տիրապետում է գնդակին և ընթացքից կատարում արդյունավետ նետում դիմացի դարպասը, ապա վերցնելով 9 մետրանոց ազատ նետումների գծի վրա դրված գնդակը, վարումով շրջանցում է իրարից 3 մետր հեռավորության վրա դրված արգելքները, 9մ հեռավորությունից կատարում է արդյունավետ նետում դարպասին:

Վերջնական գնահատականը որոշվում է 3 վարժությունների վաստակած միավորների գումարով:

Ռեկտորի Ժ/Պ՝ Տ.Սիմոնյան